նման էր թռչունների ճլվլոցին, եւ իսկոյն ոչ այնքան հեռու գտնոած թուփերի միջից լսելի եղաւ նոյնպիսի ձայն: Ռոպէ չէր անցել, երբ այնտեղից դուրս վազեց փոքրիկ երեխայ, որ գալով Սուսանի մօտ, կպաւ նրա կուրծքին, եւ իր արեւից այրոած մերկ թեւքերով գրկելով նրա պարանոցը, սկսաւ համբուրել նրան:

Այս տեսարանը խիստ հոգեշարժ էր եւ իմ սնահաւատութեան վրայ ազդեց մի դիւթական զօրութեամբ. ես մտածում էի՝ փոքրիկ երեխան չէ՞ արդեօք այն ոգիներից մինը, որի միջնորդութեամբ Սուսանը կատարում է իր կախարդական արարողութիւնները: Իմ կարծիքին աւելի ուժ էր տալիս այն դիւթական հագուստը, որ խիստ սազ էր գալիս նրա վայելուչ կազմոածքին, որի իւրաքանչիւր գծերից երեւում էր վայրենի գեղեցկութիւնը իր պարզ եւ անկեղծ հրապուրանքով: Դա նոյն երեխան էր, որ մի անգամ եւս երեւցել էր ինձ արաբական աւերակներում, երբ առաջին անգամ տեսայ Սուսանին:

Երբ նա տեսաւ ինձ, թողեց Սուսանին եւ ժպտալով վազեց իմ մօտ, կարծես, ես նրա վաղեմի ծանօթը լինէի:

— Գնի՛ր, պարոն, այս թիլիսմանը, Հիւբբին իր ձեռքովն է շինել, — ասաց ինձ:

Նա կրկին ժպտեց եւ սեւ փայլուն աչքերով սկսեց նայել իմ երեսին, տալով ինձ սաթից շինած մի տափակ-քառանկիւնի բան: Այն մի հմաեակ էր նախշած զանազան նշանագրերով, որի նմանը շատ անգամ տեսել էի կանանց պարանոցեն քաշ ընկած: Ես տոեցի իմ մօտ գտնոած միակ արծաթի դրամը եւ գնեցի փոքրիկ կախարդից թիլիսմանը: Նա գլուխ տոեց եւ կրկին վազեց Սուսանի մօտ:

— Հիւբբի, երգի՛ր մի բան պարոնի համար, նա քեզ աւելի փող տոեց, քան թէ կարժէր քո թիլիսմանը, — ասաց նրան պառաւը:

Փոքրիկ աղջիկը, առանց քաշոելու, խիստ համարձակ կերպով եղանակեց մի թեթեւ երգ ինձ բոլորովին անհասկանալի լեզոով. միայն նրա ձայնը իր թարմ եւ քաղցր հնչիւններով բաւականին ախորժ տպաւորութիւն գործեց իմ վրայ: Վերջացնելով իր երգը, նա կրկին վազեց իմ մօտ:

— Տու՛ր ձեռքդ, թող Հիւբբին գուշակէ քեզ համար, — ասաց նա իմ աջը բռնելով իր փոքրիկ ձեռքերով:

Ես թոյլ տոեցի: Նա նստեց ինձ մօտ: Ես մինչեւ այսօր չեմ կարող մոռանալ, թէ որպիսի խորհրդական ծանրութեամբ փոքրիկ մարգարէուհին սկսեց իր գուշակութիւնները, իմ աջ ափի գծերի մէջ կարդալով իմ ճակատա-